ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2021 թվականի N 379 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով և հիմք ընդունելով Սյունիքի մարզպետարանի համակարգի պետական ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված կոմպլեկտավորումները,

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել Սյունիքի մարզպետարանի համակարգի պետական ուսումնական հաստատությունների 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի կոմպլեկտավորումները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Սյունիքի մարզպետարանի համակարգի պետական ուսումնական հաստատությունների նախակրթարանների 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի կոմպլեկտավորումները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել Սյունիքի մարզպետարանի համակարգի պետական ուսումնական հաստատությունների 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի՝ համաձայն հավելված 3-ի:

24.09.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Մ.Պողոսյան**

2021 թ. սեպտեմբերի 24
ք. Կապան